

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ****ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 518/2014****ՊԱՏՎԻՐԱԿԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)****«Համացանցում էներգիա սպառող արտադրանքի պիտակավորման մասին»****Հանձնաժողովի թիվ 1059/2010, թիվ 1060/2010, թիվ 1061/2010,****թիվ 1062/2010, թիվ 626/2011, թիվ 392/2012, թիվ 874/2012,****թիվ 665/2013, թիվ 811/2013 եւ թիվ 812/2013****պատվիրակված կանոնակարգերը (ԵՄ) փոփոխող****(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «էներգիա սպառող արտադրանքի կողմից էներգիայի եւ այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 7-րդ եւ 10-րդ հոդվածները,

¹ ՊՏ L 153, 18. 06.2010թ., էջ 1:

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով Հանձնաժողովից պահանջվում է սահմանել էներգիա սպառող արտադրանքի պիտակավորման մանրամասներն այնպիսի պատվիրակված ակտերի միջոցով, որոնք պարունակում են միջոցներ, որոնցով ապահովվում է պոտենցիալ վերջնական սպառողներին պիտակի վրա եւ արտադրանքի տեղեկաթերթիկում նշված տեղեկությունների տրամադրումը հեռակա վաճառքի դեպքում, այդ թվում՝ փոստով պատվերի, կատալոգի, հեռուստաշուկայի կամ համացանցի միջոցով.
- 2) ներկայումս սահմանված է, որ հեռակա վաճառքի դեպքում պիտակի վրա առկա տեղեկությունները պետք է ներկայացվեն հատուկ կարգով: Այնուամենայնիվ, ներկայումս չկա պիտակը կամ արտադրանքի տեղեկաթերթիկը ցուցադրելու պահանջ: Հետեւաբար հեռակա վաճառքի դեպքում վերջնական սպառողների՝ իրենց գնումների մասին ավելի իրազեկված որոշումներ կայացնելու կարողությունը սահմանափակվում է, քանի որ նրանք չեն առաջնորդվում ո՛չ պիտակի գունային գամմայով, ո՛չ էլ տեղեկանում են այն մասին, թե էներգապիտակավորման որ դասն է տվյալ արտադրանքի խմբի համար լավագույն տարբերակը, կամ չեն ստանում տեղեկաթերթիկում առկա լրացուցիչ տեղեկություններ.
- 3) համացանցի միջոցով հեռակա վաճառքը կազմում է էներգիա սպառող արտադրանքի վաճառքի զգալի մասը: Համացանցի միջոցով վաճառք իրականացնելիս հնարավոր է ցուցադրել պիտակը եւ տեղեկաթերթիկը՝ առանց լրացուցիչ վարչական բեռի: Հետեւաբար դիլերները համացանցի միջոցով վաճառք իրականացնելիս պետք է ցուցադրեն պիտակը եւ տեղեկաթերթիկը.

- 4) պիտակը եւ տեղեկաթերթիկը համացանցում ցուցադրելու համար մատակարարները պետք է էներգիա սպառող արտադրանքի յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրեն պիտակի եւ տեղեկաթերթիկի էլեկտրոնային տարբերակը, օրինակ՝ դրանք հասանելի դարձնելով այն կայքում, որտեղից դիլերները կարող են ներբեռնել դրանք.
- 5) որպես բնականոն բիզնես գործունեության մաս՝ սույն կանոնակարգի պահանջները կատարելու նպատակով մատակարարները պարտավոր են պիտակն ու տեղեկաթերթիկը էլեկտրոնային եղանակով տրամադրել միայն նոր մոդելների, այդ թվում՝ առկա մոդելների արդիականացված տարբերակների համար, որոնք գործնականում նշանակում են մոդելներ, որոնք ունեն նոր մոդելի նույնականացուցիչ: Առկա մոդելների համար էլեկտրոնային պիտակի եւ տեղեկաթերթիկի տրամադրումը պետք է կատարվի կամավոր հիմունքներով.
- 6) քանի որ արտադրանքի հետ պիտակի եւ տեղեկաթերթիկի ցուցադրման համար կարող է պահանջվել էկրանի ավելի մեծ տարածք, պետք է հնարավորություն տրվի դրանք ցուցադրել ներդրված դիսփլեյի միջոցով.

- 7) Հանձնաժողովի թիվ 1059/2010¹, թիվ 1060/2010², թիվ 1061/2010³, թիվ 1062/2010⁴, թիվ 626/2011⁵, թիվ 392/2012⁶, թիվ 874/2012⁷, թիվ 665/2013⁸, թիվ 811/2010⁹ եւ թիվ 812/2013¹⁰ պատվիրակված կանոնակարգերը (ԵՄ) պետք է համապատասխանաբար փոփոխվեն,

¹ «Կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1059/2010 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 314, 30.11.2010 թ. էջ 1):

² «Կենցաղային սառնարանային տեխնիկայի էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1060/2010 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 314, 30.11.2010 թ. էջ 17):

³ «Կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1061/2010 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 314, 30.11.2010 թ. էջ 47):

⁴ «Հեռուստացույցների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1062/2010 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 314, 30.11.2010 թ. էջ 64):

⁵ «Օդորակիչների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 4-ի թիվ 626/2011 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 178, 06.07.2011 թ., էջ 1):

⁶ «Կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2012 թվականի մարտի 1-ի թիվ 392/2012 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 123, 09.05.2012 թ., էջ 1):

⁷ «Էլեկտրական լամպերի և լուսատուների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 12-ի թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 258, 26.09.2012 թ., էջ 1):

⁸ «Փոշեկուլների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 3-ի թիվ 665/2013 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 192, 13.07.2013 թ., էջ 1):

⁹ «Սենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների, սենքի տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման և արևային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների, ինչպես նաև համակցված տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման և արևային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 239, 06.09.2013 թ., էջ 1):

¹⁰ «Ջրատաքացուցիչների, ունակային ջրատաքացուցիչների և ջրատաքացուցիչ ու արևային սարքից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 812/2013 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 239, 06.09.2013 թ., էջ 83):

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

**Թիվ 1059/2010 պատվիրակված
կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ**

Թիվ 1059/2010 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) 3-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
 - ա) ավելացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետ՝

«գ) կենցաղային սպասք լվացող մեքենաների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի I հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային սպասք լվացող մեքենաների այլ մոդելների համար,».
 - բ) ավելացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) կենցաղային սպասք լվացող մեքենաների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի II հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային սպասք լվացող մեքենաների այլ մոդելների համար,».
 - 2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար
-

առաջարկվող կենցաղային սպասք լվացող մեքենաները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված կենցաղային սպասք լվացող մեքենան, շուկայահանվեն IV հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի «զ» կետի եւ 3-րդ հոդվածի «է» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են VIII հավելվածի դրույթները».

3) սույն կանոնակարգի I հավելվածի համաձայն ավելացնել նոր VIII հավելված:

Հոդված 2

Թիվ 1060/2010 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ

Թիվ 1060/2010 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) կենցաղային սառնարանային տեխնիկայի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի II հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային սառնարանային տեխնիկայի այլ մոդելների համար».

բ) ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) կենցաղային սառնարանային տեխնիկայի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային սառնարանային տեխնիկայի այլ մոդելների համար,».

2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող կենցաղային սառնարանային տեխնիկան, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվի V հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի «գ» կետի եւ 3-րդ հոդվածի «է» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են X հավելվածի դրույթները,».

3) սույն կանոնակարգի II հավելվածի համաձայն ավելացնել նոր X հավելված:

Հոդված 3

Թիվ 1061/2010 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ

Թիվ 1061/2010 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» կետ՝

«գ) կենցաղային լվացքի մեքենաների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի I հավելվածով սահմանված ձեռաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային լվացքի մեքենաների այլ մոդելների համար,».

բ) ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) կենցաղային լվացքի մեքենաների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի II հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային լվացքի մեքենաների այլ մոդելների համար,».

2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող կենցաղային լվացքի մեքենաները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվեն IV հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի «գ» կետի եւ 3-րդ հոդվածի «է» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են VIII հավելվածի դրույթները,».

3) սույն կանոնակարգի III հավելվածի համաձայն ավելացնել նոր VIII հավելված:

*Հոդված 4***Թիվ 1062/2010 պատվիրակված կանոնակարգի
(ԵՄ) փոփոխություններ**

Թիվ 1062/2010 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետ՝

«գ) հեռուստացույցի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի V հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել հեռուստացույցի այլ մոդելների համար,».

բ) 1-ին պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) հեռուստացույցի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել հեռուստացույցի այլ մոդելների համար,».

2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապահով վաճառքի համար առաջարկվող հեռուստացույցները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված հեռուստացույցը, շուկայահանվեն VI հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների

զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «զ» կետի եւ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «է» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են IX հավելվածի դրույթները,».

3) սույն կանոնակարգի IV հավելվածի համաձայն ավելացնել նոր IX հավելված:

Հոդված 5

Թիվ 626/2011 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ

Թիվ 626/2011 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «ը» կետ՝

«ը) օդորակիչի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ՝ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերի պահպանմամբ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել օդորակիչի այլ մոդելների համար,».

բ) 1-ին պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «թ» կետ՝

«թ) օդորակիչի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածով սահմանված

արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաև դիլերներին տրամադրվել օդորակիչի այլ մոդելների համար.».

2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող օդորակիչները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվեն IV եւ VI հավելվածների համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ը» կետի եւ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «թ» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են IX հավելվածի դրույթները.».

3) սույն կանոնակարգի V հավելվածի համաձայն ավելացնել նոր IX հավելված:

Հոդված 6

Թիվ 392/2012 պատվիրակված կանոնակարգի

(ԵՄ) փոփոխություններ

Թիվ 392/2012 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել են հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) ավելացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի

I հավելվածով սահմանված ձեռնարկով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների այլ մոդելների համար,».

գ) ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի II հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների այլ մոդելների համար,».

2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը 2010/30/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածով սահմանված կարգով կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվեն սույն կանոնակարգի IV հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի «զ» կետի եւ 3-րդ հոդվածի «է» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են VIII հավելվածի դրույթները,».

3) սույն կանոնակարգի VI հավելվածի համաձայն ավելացնել նոր VIII հավելված:

*Հոդված 7***Թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգի****(ԵՄ) փոփոխություններ**

Թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետ՝

«գ) լամպի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի I հավելվածի 1-ին կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել լամպի այլ մոդելների համար,».

բ) 2-րդ պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետ՝

«ե) լուսատուի՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի I հավելվածի 2-րդ կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել լուսատուի այլ մոդելների համար,».

2) 4-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերության «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող յուրաքանչյուր մոդել, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական տիրապետողը կտեսնի ցուցադրված

արտադրանքը, շուկայահանվի IV հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակը տրամադրվել է 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «զ» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են VIII հավելվածի դրույթները,».

բ) 2-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «դ» կետ՝

«դ) յուրաքանչյուր մոդել, որը համացանցի միջոցով առաջարկվել է վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար, եւ որի համար էլեկտրոնային պիտակը տրամադրվել է 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ե» կետի համաձայն, ուղեկցվում է պիտակով՝ VIII հավելվածի համաձայն,».

3) սույն կանոնակարգի VII հավելվածի համաձայն ավելացնել նոր VIII հավելված:

Հոդված 8

Թիվ 665/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ

Թիվ 665/2013 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) փոշեկուլների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի II հավելվածով սահմանված ձեւաչափով

եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել փոշեկուլների այլ մոդելների համար,».

- բ) 1-ին պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝
- «է) փոշեկուլների՝ 2015 թվականի հունվարի 1-ից շուկայահանված, նոր մոդելի նույնականացուցիչով յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ: Այն կարող է նաեւ դիլերներին տրամադրվել փոշեկուլների այլ մոդելների համար,».

- 2) 4-րդ հոդվածի «բ» կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող փոշեկուլները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը 2010/30/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածով սահմանված կարգով կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվեն սույն կանոնակարգի V հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ: Եթե առաջարկն արվել է համացանցի միջոցով, եւ էլեկտրոնային պիտակն ու արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվել են 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «զ» կետի եւ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «է» կետի համաձայն, ապա փոխարենը գործում են VIII հավելվածի դրույթները,».

- 3) սույն կանոնակարգի VIII հավելվածի համաձայն ավելացնել նոր VIII հավելված:

*Հոդված 9***Թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ**

Թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) II հավելվածի 1-ին կետով սահմանված՝ սենքերի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող սենքի տաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 1.1 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ.».

ա) 1-ին պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) սենքի տաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 1-ին կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ, իսկ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների դեպքում արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը դիլերներին տրամադրվի առնվազն ջերմային գեներատորի համար:».

գ) 1-րդ պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ ենթապարբերություն՝

«2019 թվականի սեպտեմբերի 26-ից II հավելվածի 1-ին կետով սահմանված՝ սենքերի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող սենքի

տաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 1.2 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ:».

դ) 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված՝ սենքերի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին ու ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող համակցված տաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 2.1 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ,».

ե) 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) համակցվածի տաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 2-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ, իսկ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների դեպքում արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը դիլերներին տրամադրվի առնվազն ջերմային գեներատորի համար:».

զ) 2-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ ենթապարբերություն՝

«2019 թվականի սեպտեմբերի 26-ից II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված՝ սենքերի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին ու ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող համակցված տաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար

դիլերներին տրամադրվի III հավելվածի 2.2 կետով սահմանված ձեռաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ:».

- է) 3-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» կետ՝
- «գ) ջերմակարգավորիչի յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».
- ը) 4-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» կետ՝
- «գ) արեւային սարքերի յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 4-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».
- թ) 5-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» կետ՝
- «գ) II հավելվածի 1-ին կետով սահմանված՝ սենքերի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող՝ սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 3-րդ կետով սահմանված ձեռաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ,».
- ժ) 5-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝
- «է) սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 5-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».
- ժա) 6-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» կետ՝

«գ) II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված՝ սենքերի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին ու ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող՝ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 4-րդ կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ,».

ժբ) 6-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 6-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».

2) 4-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները,

ա) 1-ին պարբերության «բ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող սենքերի տաքացուցիչները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի սենքի ցուցադրված տաքացուցիչը, շուկայահանվեն VI հավելվածի 1-ին կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են IX հավելվածի դրույթները,».

բ) 2-րդ պարբերության «բ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

- «բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող համակցված տաքացուցիչները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված համակցված տաքացուցիչը, շուկայահանվեն VI հավելվածի 2-րդ կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են IX հավելվածի դրույթները,».
- գ) 3-րդ պարբերության «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
- «բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող՝ սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումները, շուկայահանվեն VI հավելվածի 3-րդ կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են IX հավելվածի դրույթները,».
- դ) 4-րդ պարբերության «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
- «բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող՝ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից

բաղկացած համալիր սարքավորումները, շուկայահանվեն VI հավելվածի 4-րդ կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են IX հավելվածի դրույթները,».

- 3) սույն կանոնակարգի IX հավելվածի համաձայն փոփոխել VI հավելվածը.
- 4) սույն կանոնակարգի IX հավելվածի համաձայն ավելացնել նոր IX հավելված:

Հոդված 10

Թիվ 812/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) փոփոխություններ

Թիվ 812/2013 պատվիրակված կանոնակարգում (ԵՄ) կատարել հետևյալ փոփոխությունները,

- 1) 3-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները,
 - ա) 1-ին պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) II հավելվածի 1-ին կետով սահմանված ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 1.1 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ,».
 - բ) 1-ին պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 1-ին կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ, մինչդեռ ջերմային

պոմպով ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի դեպքում արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկը տրամադրվի առնվազն ջերմային գեներատորի համար:».

- գ) 1-ին պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ ենթապարբերություն՝

«2017 թվականի սեպտեմբերի 26-ից II հավելվածի 1-ին կետով սահմանված՝ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 1.2 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ:».

- դ) 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետ՝

«զ) II հավելվածի 2-րդ կետով սահմանված՝ էներգաարդյունավետության դասերին համապատասխանող ունակային ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 2.1 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ,».

- ե) 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) ունակային ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 2-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».

- զ) 2-րդ պարբերությանն ավելացնել հետևյալ բովանդակությամբ ենթապարբերություն՝

«2017 թվականի սեպտեմբերի 26-ից II հավելվածի 2-րդ կետով սահմանված էներգաարդյունավետության դասերին

համապատասխանող ունակային ջրատաքացուցիչների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 2.2 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ:».

է) 3-րդ պարբերությունը լրացվել է հետեւյալ բովանդակությամբ «գ» կետով՝

«գ) արեւային սարքերի յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».

ը) 4-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» կետ՝

«գ) II հավելվածի 1-ին կետով սահմանված՝ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող՝ ջրատաքացուցիչ ու արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի III հավելվածի 3-րդ կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով էլեկտրոնային պիտակ,».

թ) 4-րդ պարբերությանն ավելացնել հետեւյալ բովանդակությամբ «է» կետ՝

«է) ջրատաքացուցիչ ու արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվի IV հավելվածի 4-րդ կետով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ:».

2) 4-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները,

ա) 1-ին պարբերության «բ» կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող ջրատաքացուցիչները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված

ջրատաքացուցիչը, շուկայահանվեն մատակարարների կողմից VI հավելվածի 1-ին կետի համաձայն տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են X հավելվածի դրույթները,».

- բ) 2-րդ պարբերության «բ» կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝
- «բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող ունակային ջրատաքացուցիչները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված ունակային ջրատաքացուցիչը, շուկայահանվեն մատակարարների կողմից VI հավելվածի 2-րդ կետի համաձայն տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են X հավելվածի դրույթները,».
- գ) 3-րդ պարբերության «բ» կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝
- «բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող ջրատաքացուցիչից ու արեային սարքից բաղկացած համալիր սարքավորումները, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ջրատաքացուցիչից ու արեային սարքից բաղկացած համալիր սարքավորումները, շուկայահանվեն մատակարարների կողմից VI հավելվածի 3-րդ կետի համաձայն տրամադրված տեղեկությունների զետեղմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում գործում են X հավելվածի դրույթները,».

3) սույն կանոնակարգի X հավելվածի համաձայն փոփոխվել է VI հավելվածը.

4) սույն կանոնակարգի X հավելվածի համաձայն ավելացվել է նոր X հավելված:

*Հոդված 11***Ուժի մեջ մտնելը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության *պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2014 թվականի մարտի 5-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***Թիվ 1059/2010 պատվիրակված կանոնակարգի
(ԵՄ) հավելվածների փոփոխություններ**

Ավելացնել հետևյալ բովանդակությամբ VIII հավելվածը՝

*«ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Համացանցի միջոցով վաճառքի, վարձակալության կամ ապառիկ
վաճառքի դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

- 1) Սույն հավելվածի 2-5-րդ կետերի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝
 - ա) «դիսփլեյի մեխանիզմ»՝ ցանկացած էկրան, ներառյալ՝ սենսորային էկրանը կամ այլ վիզուալ տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են ինտերնետային բովանդակությունն օգտատերերին ցուցադրելու համար.
 - բ) «ներկառուցված դիսփլեյ»՝ վիզուալ ինտերֆեյս, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ.
 - գ) «սենսորային էկրան»՝ հպմանն արձագանքող էկրան, ինչպես օրինակ՝ պլանշետային համակարգչի կամ սմարթֆոնի դեպքում.
 - դ) «այլընտրանքային տեքստ»՝ տեքստ, որը տրամադրվում է որպես այն գրաֆիկի այլընտրանք, որը թույլ է տալիս տեղեկությունները ներկայացնել ոչ գրաֆիկական ձևով, եթե ցուցադրող սարքվածքները չեն կարող վերարտադրել գրաֆիկը, կամ որպես հասանելիության

միջոց, ինչպես օրինակ՝ ձայնի սինթեզի հավելվածների մուտքային տվյալները:

- 2) 3-րդ հոդվածի «գ» կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Պիտակի չափը պետք է լինի այնպիսին, որ այն հստակ տեսանելի ու ընթեռնելի լինի, ինչպես նաև համապատասխանի I հավելվածի 2-րդ կետում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված մասնագրերին: Ներկառուցված դիսփլեյի կիրառման դեպքում պիտակը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:
- 3) Ներկառուցված դիսփլեյի դեպքում պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը՝
 - ա) պիտակի վրա նշված արտադրանքի էներգաարդյունավետության դասին համապատասխանող գույնով սլաք է.
 - բ) սլաքի վրա ցույց է տալիս արտադրանքի էներգաարդյունավետության դասը՝ սպիտակ գույնով, գնի տառաչափին համարժեք տառաչափով. եւ
 - գ) ունի հետեւյալ երկու ձեւաչափերից մեկը՝



- 4) ներկառուցված դիսփլեյի դեպքում պիտակի ցուցադրման հաջորդականությունը հետեւյալն է՝
 - ա) սույն հավելվածի 3-րդ կետում նշված պատկերը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին.
 - բ) պատկերը պարունակում է պիտակին արված հղում.

- գ) պիտակը ցուցադրվում է մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ.
- դ) պիտակը ցուցադրվում է ելնող պատուհանով, նոր ներդիրով, նոր էջով կամ էկրանի ներդրված դիսփլեյով.
- ե) սենսորային էկրաններին պիտակի խոշորացման համար կիրառվում են սենսորային խոշորացման սարքվածքների պայմանական նշանները.
- զ) պիտակի ցուցադրությունն ավարտվում է «փակել» ընտրանքի կոճակի միջոցով կամ փակելու այլ ստանդարտ մեխանիզմով.
- է) գրաֆիկի համար նախատեսված այլընտրանքային տեքստը, որը պետք է ցուցադրվի պիտակի ցուցադրության ձախողման դեպքում, արտադրանքի էներգաարդյունավետության դասն է, որը ներկայացվում է գնի տառաչափին համարժեք տառաչափով:
- 5) 3-րդ հոդվածի «է» կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված՝ արտադրանքի համապատասխան տեղեկաթերթիկը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Արտադրանքի տեղեկաթերթիկի չափը պետք է լինի այնպիսին, որ այն հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի: Արտադրանքի տեղեկաթերթիկը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում տեղեկաթերթիկի հասանելիության համար օգտագործվող հղման վրա հստակ եւ ընթեռնելի ձեւով նշվում է «Արտադրանքի տեղեկաթերթիկ»:
Ներկառուցված դիսփլեյի օգտագործման դեպքում արտադրանքի տեղեկաթերթիկը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ հղման վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:»:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Թիվ 1060/2010 պատվիրակված կանոնակարգի
(ԵՄ) հավելվածների փոփոխություններ**

Ավելացնել հետևյալ բովանդակությամբ X հավելվածը՝

*«ՀԱՎԵԼՎԱԾ X***Համացանցի միջոցով վաճառքի, վարձակալության
կամ ապառիկ վաճառքի դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

- 1) Սույն հավելվածի 2-5-րդ կետերի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝
 - ա) «դիսփլեյի մեխանիզմ»՝ ցանկացած էկրան, ներառյալ՝ սենսորային էկրանը կամ այլ վիզուալ տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են ինտերնետային բովանդակությունն օգտատերերին ցուցադրելու համար.
 - բ) «ներկառուցված դիսփլեյ»՝ վիզուալ ինտերֆեյս, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ.
 - գ) «սենսորային էկրան»՝ հպմանն արձագանքող էկրան, ինչպես օրինակ՝ պլանշետային համակարգչի կամ սմարթֆոնի դեպքում.
 - դ) «այլընտրանքային տեքստ»՝ տեքստ, որը տրամադրվում է որպես այն գրաֆիկի այլընտրանք, որը թույլ է տալիս տեղեկությունները ներկայացնել ոչ գրաֆիկական ձևով, եթե ցուցադրող սարքվածքները չեն կարող վերարտադրել գրաֆիկը, կամ որպես հասանելիության միջոց, ինչպես օրինակ՝ ձայնի սինթեզի հավելվածների մուտքային տվյալները:

- 2) 3-րդ հոդվածի «գ» կետի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Պիտակի չափը պետք է լինի այնպիսին, որ այն հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի, ինչպես նաեւ համապատասխանի II հավելվածի 3-րդ կետում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված մասնագրերին: Ներկառուցված դիսփլեյի կիրառման դեպքում պիտակը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:
